

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ»
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՍԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Լեզուն՝ հայերեն, ռուսերեն

Ձևաչափ՝ PDF, DOC, թղթային

Թողարկման ժամկետը¹՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 30/31-րդ օրը

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցները կառուցվում են ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվող պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով նախատեսված ճյուղային (գերատեսչական) և տեղական (համայնքային) վիճակագրություն իրականացնող մարմինների, վիճակագրական այլ տեղեկություններ տրամադրողների կողմից նեկայացվող պետական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթերի, տեղեկագրերի), հաշվարկների և ՀՀ ԱՎԾ դրանց ամփոփման, ինչպես նաև մշակվող ցուցանիշների, իրականացվող հետազոտությունների, տեղեկատվահրատարակչական գործունեության արդյունքում (ժողովածուներ, տեղեկագրեր, մամուլի հաղորդագրություններ, վիճակագրական զեկույցներ) ամփոփված նյութերի հիման վրա:



1999թ. ապրիլից, զեկույցների բովանդակությունը ներկայացվում է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից մշակված՝ «Տվյալների տարածման ընդհանուր համակարգի» հատվածներին համապատասխան:

¹ Չեկույցի ռուսերեն թողարկումները՝ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 35/36-րդ օրը:

Russian version On 35th /36th day after the reference period.

Տեղեկատվական ամսական զեկույցներն ամսական պարբերականությամբ ներկայացվում են հակիրճ, իսկ եռամսյակային պարբերականությամբ՝ առավել մանրամասն, ընդլայնված ու ընդհանրական: Եռամսյակային զեկույցներում ընդգրկվում են «Մեթոդաբանական պարզաբանումներ», «ԱՊՀ երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ», «Հետաքրքրաշարժ վիճակագրություն» և «ՀՀ ԱՎԾ փաստացի հրապարակումների ցանկը» հավելվածները: Ջեկույցները գետեղվում են ՀՀ ԱՎԾ <http://www.armstat.am> կայքէջում (<http://www.armstat.info> հայելային կայքէջում):

ԱՄՀ «Տվյալների տարածման հատուկ ստանդարտ»-ին, որին 2003թ. նոյեմբերի 7-ից անդամակցում է նաև Հայաստանը, համապատասխան՝ ԱՄՀ ստանդարտների տարածման տեղեկագրում՝ <http://dsbb.inf.org/Applications/web/dsbbhome/> առկա է Հայաստանի վիճակագրության համապարփակ մեթոդաբանությունն անգլերենով, իսկ նույն ստանդարտի ՀՀ ԱՎԾ կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում <http://docs.armstat.am/nsdp/> առկա են երկրի համապատասխան տվյալները:

«ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների հատվածներում առկա նախնական կամ հաշվարկային ցուցանիշները հաջորդ հրապարակումներում կարող են ենթարկվել ճշգրտման, պայմանավորված այն հանգամանքով, որ հաշվետու ժամանակահատվածը հնարավորություն չի ընձեռում սկզբնական տեղեկատվության արժանահավատությունն առավել խորությամբ ճշգրտելու, ինչի իրականացումը «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի (գ) կետի դրույթներին համապատասխան, պահանջում է լրացուցիչ ժամանակ:

**“SOCIO-ECONOMIC SITUATION OF THE REPUBLIC OF ARMENIA”
INFORMATIONAL MONTHLY REPORT**

Language available: Armenian, Russian

Format: PDF, DOC, paper

Issue: On 30th/31st day after the reference period

The “Socio-economic Situation of the Republic of Armenia” monthly informational reports of the National Statistical Service of the Republic of Armenia are built on the state statistical reports (questionnaires, bulletins, etc.) submitted by the branch (departmental) and local (community) statistical bodies, other statistical data suppliers, calculations and their summarizing by the NSS, as well as indicators processed, surveys carried out by NSS, materials (publications, bulletins, press releases, statistical reports) summarized as a result of informational and publishing activity, which are foreseen by the **Programs of State Statistical Work** approved by the Resolution of the State Council on Statistics of the Republic of Armenia.

Since April 1999, the content of the reports is represented in compliance with the sectors of the International Monetary Fund’s (IMF) “General Data Dissemination System” (GDDS).

Informational monthly reports are presented briefly on the monthly basis and on the quarterly basis-more detailed, comprehensive and general.

Quarterly reports include Annexes “Methodological Explanatory Notes”, “Main Macroeconomic Indicators of the CIS Countries”, “Interesting Statistics” and “Actual Publications List” of NSS RA.

Information reflected in the reports, are posted on the Web site of the National Statistical Service of RA: <http://www.armstat.am> (mirror website <http://www.armstat.info>).

In accordance with the IMF’s SDDS (to which Re-public of Armenia has been subscribed since November 7, 2003), IMF’s Dissemination Standards Bulletin Board (<http://dsbb.inf.org/Applications/web/dsbbhome/>) provides comprehensive methodology on Armenia’s statistics in English and actual country data included in the mandatory National Summary Data Page (<http://docs.armstat.am/nsdp/>) maintained by the NSS of RA.

Preliminary or calculated indicators available in the Socio-economic Situation of the Republic of Armenia monthly informational reports can be verified in the following releases, given by the fact that the reporting period doesn’t allow to check reliability of initial data in more depth, which, according to the 15 the Article of the RA LAW “On State Statistics”, requires extra time.